ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ Հ Կոտայքի մարզ Նոր Հաճըն համայնք, գ.Նոր Արտամետ, 2-րդ փող 1-ին նրբ 1, հեռախոս +374 77 382138
norartametmank@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի

2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ

ԳՆԱՀԱՏՈՒՄ

01.09.2025թ

Ներածություն

Սույն փաստաթուղթը ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Արտամետի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի իրականացված ներքին գնահատման արդյունքում կազմված հաշվետվությունն է՝ համաձայն ՀՀ կառավարության 13 մայիսի 2021 թ-ի N 764- Ն որոշման:

Ներքին գնահատումն իրենից ներկայացնում է մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկման և հսկողության իրականացման գործընթաց: Ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման նպատակն է՝

1. Նախադպրոցական կրթության բնագավառում պետական քաղաքականության միասնականության ապահովմանը, նախադպրոցական կրթության որակի բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը նպաստելը:

2.ՈՒսումնական հաստատությունների միջև կրթական ծառայությունների մատուցման որակի բարձրացմանն ուղղված մրցակցության ձևավորումը.

3.Շահառուների՝ սաների,նրանց ծնողների, մանկավարժական աշխատողների,նախարարության,տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, Նոր Հաճըն համայնքապետարանի շրջանում հաստատության գործունեության վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացումը:

Ներքին գնահատումը իրականացված է հաստատության տնօրենի՝ 25.09.2024 թվականի №48-Լ/1 հրամանով կազմավորված հանձնաժողովի կողմից, որի անդամներն են հանդիսանում՝

1.Հանձնաժողովի նախագահ՝ <<Նոր Արտամետի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Պողոսյան Ռուզաննա
2.Հանձնաժողովի քարտուղար՝ <<Նոր Արտամետի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տաստիարակի ժ/պ Մարկոսյան Անահիտ
3. Հանձնաժողովի անդամ՝ <<Նոր Արտամետի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տաստիարակի ժ/պ Պողոսյան Լորա
4. Հանձնաժողովի անդամ՝ <<Նոր Արտամետի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնտեսվար Պետրոսյան Հռիփսիմե
5.Հանձնաժողովի անդամ՝ Նոր Հաճընի համայքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Իսպիրյան Անի
6. Հանձնաժողովի անդամ՝ Նոր Հաճընի համայքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Գրիգորյան Աննա
7.Հանձնաժողովի անդամ՝ <<Նոր Արտամետի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ծնողխորհրդի անդամ՝ Ծովինար Պողոսյան
8Հանձնաժողովի անդամ՝ <<Նոր Արտամետի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ծնողխորհրդի անդամ՝ Հռիփսիմե Մարգարյան
9.Հանձնաժողովի անդամ՝ <<Նոր Արտամետի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ծնողխորհրդի անդամ՝ Լուսինե Ավակյան

Ներքին գնահատման գործընթացին մասնակցում են հաստատության մանկավարժական և վարչատնտեսական անձնակազմերը :

Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

«12» 07. 2022թ. N 1275-Ա/2 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը՝ «Նոր Արտամետի մանկապարտեզ»
Կազմակերպաիրավական տեսակը՝ ՀՈԱԿ
Սեփականության ձևը՝ համայնքային
Հասցե՝ գյուղ Նոր Արտամետ, 2 փող. 1 նրբ. 1
Հեռ.՝ 077382138
Պաշտոնական կայք էջ՝ norartametmank@gmail.com

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԵՐ

Հաստատությունն իր ներքին գնահատումն իրականացնելիս պետք է առաջնորդվի ստորև բերված հարցաշարերով.

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից.	Այո		
բ. ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար.	Այո		
գ. արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին.	Այո		
դ. ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս է բերվում հաստատության տարածքից.	Այո		
ե. ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝	Այո		

կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ.			

«ա», «բ» չափանիշների համար անհրաժեշտ է իրականացնել դիտարկում-փաստագրում և արձանագրել հաստատության շենքի ֆիզիկական վիճակը: «ե» չափանիշի համար պետք է հիմք ընդունել հաստատության կողմից համապատասխան կազմակերպությունների (ախտահարման-կանխարգելման, արտակարգ իրավիճակների ծառայության) հետ կնքված պայմանագրերը: Սույն աղյուսակը լրացնելիս ներքնում պետք է նշվի նաև համապատասխան փաստաթղթերի առկայության և գործողության ժամկետների, այդ թվում՝ պայմանագրերի, կատարման մասին:

Նոր Արտամետի մանկապարտեզի շինարարական աշխատանքները ավարտվել են 2024 թվականին: Մանկապարտեզը շահագործման է հանձնվել 2024 թվականի սեպտեմբերի 02-ին: Շենքը 1 հարկանի է, տիպային, գտնվում է գյուղ Նոր Արտամետում 2-րդ փողոց 1նրբանցք 1 հասցեում: Հաստատությունն ունի 0,314հա տարածք, որը ցանկապատված է, մեկուսացված և հեռացված է ավտոճանապարհային գոտուց, աղմուկից, օդի աղտոտման աղբյուր հանդիսացող արդյունաբերական և այլ օբյեկտներից: Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին: ՈՒսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս է բերվում հաստատության տարածքից:

Ախտահանմա-կանխարգելման նպատակով կնքված պայմանագրեր՝

1. Աղբահանության պայմանագիր 02.09.2025 Նոր Հաճըն համայնքապետարան

Ձև 2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 24/42

ք. Նոր Հաճըն «01» 09 2024 թ.

Նոր Հաճընի քաղաքային համայնքը (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս համայնքի ղեկավար Գ.Մաթևոսյանի, որը գործում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, մի կողմից և ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքի «Նոր Արտամետի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Ռ. Պողոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության (կամ լիազորագրի) հիման վրա (այսուհետ՝ Կազմակերպություն) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Համայնքը պարտավորվում է իրականացնել Կազմակերպության բնականոն գործունեության հետևանքով առաջացած աղբի կանոնավոր հավաքումն ու տեղափոխումը՝ ՀՀ օրենսդրությամբ և Համայնքի ավագանու սահմանած կանոններին համապատասխան:

Կազմակերպությունը պարտավորվում է վճարել աղբահանության համար սահմանված տեղական վճարը՝ սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:

1.2. Կողմերը սույն պայմանագրի շրջանակներում ղեկավարվում են ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով, Համայնքի ավագանու և քաղաքապետի որոշումներով և այլ իրավական ակտերով:

1.3. Աղբի բեռնումը արկղերից և աղբատար խողովակների բունկերներից բեռնատար /աղբատար/ մեքենաներ կատարվում են Համայնքի կողմից:

1.4. Համայնքի հետ համաձայնեցված վայրում տեղակայված մեծածավալ (մեծամասշտաբ) աղբի հավաքումն ու փոխադրումը կատարվում է Կազմակերպության լրացուցիչ պատվերի հիման վրա՝ աղբի տեղափոխման համար գանձվող առանձին վճարի դիմաց, որի մասին կնքվում է լրացուցիչ համաձայնագիր:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Համայնքը պարտավոր է՝

2.1.1. Պատշաճ ապահովել Կազմակերպության բնականոն գործունեությունից առաջացած աղբի հավաքումն ու փոխադրումը:

2.1.2 Աղբահեռացման հաճախականությունը և աղբահանության ձևը իրականացնել աղբահանություն սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան:

2.1.3. Ինքնուրույն իրականացնել աղբի հավաքումն ու փոխադրումը այն տարածքից, որն աղտոտվել էր աղբախցերի բեռման աշխատանքներից հետո:

2.1.4. Կազմակերպությանը հստակ տեղեկություն տալ այն պաշտոնատար անձանց և նրանց դիմելու ձևերի և միջոցների մասին (պաշտոնատար անձի գտնվելու վայր, հեռախոսահամարներ), որոնց Կազմակերպությունը կարող է դիմել աղբահանության ժամանակ թերություններ արձանագրելիս:

2.2. Համայնքն իրավունք ունի Կազմակերպությունից պահանջել՝

2.2.1. Աղբը հավաքել դրանց համար նախատեսված վայրում՝ Համայնքի կողմից սահմանված ձևով:

2.2.2. Պայմանագրային պարտավորությունների խախտումների, ինչպես նաև աղբը չսահմանված, չնախատեսված վայրում դուրս թափելու համար վճարել տուգանքներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով ու կարգով:

2.3. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.3.1. Վճարել Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար ավագանու կողմից սահմանած չափով տեղական վճարը՝ մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

2.3.2. Աղբը տեղադրել միայն համայնքի կողմից սահմանված վայրերում:

2.3.3. Տեղյակ պահել Համայնքին Կազմակերպության մոտ տեղի ունեցած այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել աղբի ծավալի վրա, փոփոխություն կատարելու օրվանից սկսած 10 օրվա ընթացքում:

2.4. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.4.1. Ստուգել աղբահանության կազմակերպման որակը, համապատասխանությունը Համայնքի կողմից հաստատված գրաֆիկին ու կարգին:

2.4.2. Հայտնաբերված թերությունների մասին տեղեկացնել Համայնքին՝ թերությունների հայտնաբերման օրվան հաջորդող օրը:

3. Այլ պայմաններ

3.1.: Կազմակերպության օգտագործվող տարածքը 196 քմ է: Ամսական ընդհանուր գումարը Կազմակերպության համար կազմում է 784 (յոթ հարյուր ութսունչորս) դրամ:

Աղբահանության դիմաց գանձվող տեղական վճարը սահմանված ժամկետում չվճարելու համար Կազմակերպությունը պարտավոր է Համայնքին վճարել տուգանք՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով: Տուգանքի վճարումը չի ազատում Կազմակերպությանն արդեն կատարված աղբահանության համար վճարելու պարտականություններից:

3.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

3.3. Պայմանագիրը համարվում է կնքված ստորագրման պահից և գործում է մեկ տարի: Այդ ժամկետը լրանալուց հետո, եթե կողմերից ոչ մեկը չի պահանջում պայմանագրի լուծում, ապա այն շարունակվում է անորոշ ժամանակով:

3.4. Պայմանագրի լրացումները և փոփոխությունները իրավական ուժ ունեն և հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, եթե կատարվել են գրավոր և ստորագրվել Կազմակերպության և Համայնքի կողմից:

3.5. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Եթե վիճելի հարցի շուրջ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա դրանք լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

3.6. Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե ապացուցում են, որ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարումը անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք է:

ՀԱՄԱՅՆՔ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՎՀՀ 03560702	«Նոր Արտամետի մանկապարտեզ» ՀՈԱԿ
ՀՀ ՖՆ Գործ. վարչություն	Գ. Նոր Արտամետ, 1-ին փողոց, 3 փակ. N 5
Հ/Հ **900115001936**	ՀՎՀՀ 03573309
Նոր Հաճըն համայնքի ղեկավար	Հ/Հ 1930026517460O
Գ.Մաթևոսյան	Տնօրեն՝ Ռ. Պողոսյան

2. Կրծողների դեմ պայքարի ծառայությունների մատուցման պետական գնման Պայմանագիր N 24/36 02 սեպտեմբեր 2024թ, ԱՋ Անուշ Գևորգյան

ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ ԿՊՀԾՁԲ-2024/ՊՄԱՊՁԲ 24/36

«02» սեպտեմբեր 2024 թ.

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի «Նոր Արտամետի մանկապարտեզ» ՀՈՒԱԿ, տնօրեն Ռ. Պողոսյանը, որը գործում է կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, Անուշ Գևորգյան ԱՁ, ի դեմս անհատ ձեռնարկատեր Ա. Գևորգյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն):

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման 5 աշխատանքային օրվա ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում սույն մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյան ԱԱՀ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայության մատուցելու պարտավորում Կատարողին վճարման ենթակա գումարից

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կՊանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից և նրանցից ստացվող ծառայությունները, որոնց

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2, N3 և N3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի
«Նոր Արտամետի մանկապարտեզ» ՀՈԱԿ
ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Արտամետ, 2 փող. 1 նրբ. 1
ՀՎՀՀ 03573309
ՀՀ 19300265174600
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝
Ռ.Պողոսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Անուշ Գևորգյան ԱՁ

ՀՀ Երևան, Դավթաշեն,
5-րդ փողոց, 42 տ..
ՀՎՀՀ 72971974
ՀՀ 2474402665560000
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ Կենտրոն մ/6

Անհատ ձեռնարկատեր՝
Ա.Գևորգյան

(ստորագրություն)
Կ.Տ.

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

(ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված՝ անվտանգության և առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերը)

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է.	Այո		
բ.ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահագործման անվտանգության նորմերին.	Այո		
գ. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր.	Այո		
դ.ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով.	Այո		
ե.շենքը հարմարեցված է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցող սաների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին (թեքահարթակներ, լայն դռներ և այլն).		մասամբ	
զ. ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով.	Այո		
է.համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին.	Այո		
ը. անիվներով տեղաշարժվող ծանր իրերն	-	-	-

ամրացված են հատակին.			
թ. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները դեկորատիվ իրերը.	Այո		
ժ. ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին.	Այո		
ժա. ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր.			Ոչ
ժբ. ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է.	Այո		
ժգ. ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սաների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները.	Այո		
ժդ. ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, խմբասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով.	Այո		
ժե. ուսումնական հաստատության տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով.	Այո		
ժզ. ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին.	Այո		
ժէ. խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված նորմերին.	Այո		

«ա»-ից «դ» չափանիշները դիտարկելով՝ հանձնաժողովն ազատ շարադրանքով պետք է նկարագրի հաստատության տարածքի, շենքի ու շինությունների, գույքի անվտանգ շահագործման,

սաների և աշխատակիցների անվտանգ կենսագործունեության ապահովման և առողջության պահպանման հետ կապված վիճակը և առկա խնդիրները: Դիտարկման շրջայց կատարելիս հանձնաժողովը պետք է նկարագրի առկա իրավիճակը և արձանագրի բացահայտված շեղումներն ու անհամապատասխանությունները: Դիտարկում-փաստագրումն իրականացնելիս հաստատությունը պետք է առաջնորդվի համապատասխան նորմատիվային և իր ներքին փաստաթղթերով:

«ա» չափանիշի համար անհրաժեշտ է իրականացնել դիտարկում-փաստագրում և արձանագրել հաստատության շենքի ֆիզիկական վիճակը ու նշել, թե ինչպիսի վերանորոգման կարիք ունի այն՝ կապիտալ, մասնակի կամ ընթացիկ: Այնուհետև ցանկալի է մանրամասնել վերանորոգման կարիքները և տալ դրանց մոտավոր ֆինանսական գնահատականը:

«բ» չափանիշի համար դիտարկում-փաստագրման միջոցով պետք է արձանագրել, թե արդյոք շենքը կայուն է հետևյալ վտանգների կամ դրանցից որևէ մեկի ազդեցության նկատմամբ (ուժեղ քամիներ, սողանքներ, երկրաշարժեր, հրդեհներ, խոնավություն և այլն):

«ժբ»- ից «ժե» չափանիշների համար ևս պետք է իրականացնել դիտարկում-փաստագրում և հաջորդիվ անդրադառնալ սաների և աշխատողների տարհանման խնդիրներին: Կցել տարահանման պլանի լուսապատճենը:

Հաստատության ներքին գնահատման հանձնաժողովը՝ տնօրենի դեկավարությամբ , «ա»-ից «դ» չափանիշները դիտարկելով՝ արձանագրել է շենքի կապիտալ վերանորոգված լինելու փաստը: Ուսումնական հաստատությունում պահպանված են աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ.-ի դեկտեմբերի 10-ի թիվ 95-Ն հրամանով սահմանված՝ անվտանգության և առողջապահության նախարարի 2002 թ.-ի դեկտեմբերի 20-ի թիվ 857 –Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերը ամբողջությամբ՝ տաղավարներ առկա են,խաղահրապարակը մասնակի է կահավորված:

Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:Տանիքը պատված է հրակայուն նյութերով : Հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին: Հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով: Շենքը մասամբ է հարմարեցված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԶԱՊԿ) ունեցող սաներին (թեքահարթակներ ,լայն դռներ և այլն):Անիվներով տեղաշարժվող ծանր իրեր չունենք:Բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը: Հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն: Պատուհանները չունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր, բայց բոլոր պատուհաններն ու դռները ունեն ցանցեր: Հաստատության ամբողջ կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է :Մշակված է և առկա է մարդկանց տարահանման պլան, պլան- սխեմաները փակցված են՝ համապատասխան գունային ցուցասլաքներով:

Հաստատության տարահանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն իրերով: Հաստատությունը լիցենզավորված է / №1111, 01.05.2024թ. անժամկետ : Խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված նորմերին:

Կից՝ տարահանման պլանի լուսապատճեն:



«ժզ» չափանիշի համար կցել լիցենզիայի լուսապատճենը և լրացնել ստորև բերված *աղյուսակը.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ **Ա** **N** **1111**

Սույնով վավերացվում է, որ
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Արտամետի մանկապարտեզ» ՀՈԱԿ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Կոտայք մարզի, համայնք Նոր Հաճըն, գ. Նոր Արտամետ 2-րդ փողոց 1-ին նրբանցք 1

(գտնվելու վայրը)

ՀՀ Կոտայք մարզի, համայնք Նոր Հաճըն, գ. Նոր Արտամետ 2-րդ փողոց 1-ին նրբանցք 1

(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու
նախադպրոցական կրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ _____ *Ժ. Անդրեասյան*
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.

01 *ապրիլի* *2025* թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՍԵՐԻԱ ՆԽԴ N 000409

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Դ Ի Ր N 001

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ (ՀԻՄՆԱԿԱՆ) ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա N 1111 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Արտամետի մանկապարտեզ» ՀՈԱԿ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «01» ապրիլի 2025 թվականի N 785-Ա/2 հրամանին համապատասխան իրավունք ունի կրթական գործունեություն իրականացնել հետևյալ պայմաններով.

N	Կրթական ծրագիրը	Հաստատության տեսակը	Տարիքային խմբերը	Համակազմի սահմանային թիվը	Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողությունը	Կրթության ձևը	Հասարակական շինությունների նպատակային նշանակությանը համապատասխան ուսումնական հաստատության նվազագույն տարածքը (քմ, սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման)
	Նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագիր	Մանկապարտեզ	Տարատարիք (3-5 տարեկան խումբ	30	Գրական հայերեն	1 տարի	Առկա	Անհատույց օգտագործման 466. 62 քմ
			Ավագ խումբ	30				

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման վարչության պետ՝ Ա. Արշակյան
(Անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Կ.Տ.

01 ապրիլի 2025թ.
(Ամիս, ամսաթիվ)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում:

Եզրակացություն N 188/8

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողով»-ի 2025 թվականի մարտի 26-ի N 188 նիստի արձանագրության օրակարգի N 8 կետով քննարկված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Արտամետի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագրով գործունեության լիցենզիա ստանալու մասին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովը» 2025 թվականի մարտի 26-ին կայացած նիստի ընթացքում ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Արտամետի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագրով գործունեության լիցենզիա ստանալու մասին հարցը, հարցի վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման վարչության եզրակացությունը, փակ գաղտնի քվեարկությամբ որոշեց. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի «Նոր Արտամետի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տալ նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագրով լիցենզիա:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սվաջյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ս. Հայոցյան

Քարտուղար՝ Վ. Խաչատրյան

Անդամներ՝ Ա. Արշակյան

Ա. Պողոսյան

Թ. Սարգսյան

Հ. Գևորգյան



№	Անվանումը	Մակերեսը, քմ
1	Նախասրահ	7.80
2	Միջանցք	22.00
3	Տարազների սենյակ	10.74
4	Տարազների սենյակ	10.74
5	Հանդերձարան բաժին	21.74
6	Հանդերձարան բաժին	21.75
7	Լոբբի-բար	48.16
8	Դահլիճ	48.16
9	Սցենա	48.16
10	Նկարահանում	10.14
11	Լվացարան	10.14
12	Լվացարան	3.50
13	Զուգարան	4.10
14	Զուգարան	3.50
15	Զուգարան	4.10
16	Զուգարան	6.39
17	Նախամուտք-կաթսայատուն	24.80
18	Խոհանոց	4.16
19	Բանբարեղենի պահեստ	7.02
20	Չոր մթերքի պահեստ	14.57
21	Բժշկի սենյակ	1.96
22	Նախամուտք	1.67
23	Սան. հանգույց	1.76
24	Սան. հանգույց	11.88
